ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը ֆիզիկական դաստիարակության, սպորտի և հոգեբանության ոլորտներում,

Նկատի ունենալով՝ համագործակցության իրական հնարավորություններն ու փոխշահավետության սկզբունքը,

Կարևորելով՝ հոգեբանական գիտության և պրակտիկայի դերը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը՝ համատեղ գիտահետազոտական և կրթական գործունեության կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետև՝ Ինստիտուտ) և «Հայաստանի հոգեբանների միություն» մասնագիտական ՀԿ-ն (այսուհետև՝ Միություն) պատրաստակամ են ֆիզիկական դաստիարակության, սպորտի և հոգեբանության ոլորտներում համատեղ իրականացնել գիտահետազոտական, կիրառական ծրագրեր, փորձի փոխանակում:

2.2 Կողմերը համագործակցության ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով ապահովում են իրենց կողմից ներկայացվող մասնագետների փոխգործակցությունը՝ մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների, աշխատաժողովների և այլ ուսումնագիտական միջոցառումների կազմակերպման շրջանակում, որոնք միտված են հոգեբանական գիտելիքների և հմտությունների խորացմանը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:

2.3 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.3.1 Գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման շուրջ,

2.3.2 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնագիտական բնույթի ծրագրերի և համապատասխան ոլորտներում հետազոտությունների իրականացման աշխատանքներում,

2.3.3 Ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների պրակտիկաների և գիտահետազոտական գործունեության ուղղությամբ,

2.3.4 Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման միջոցով:

2.3.5 Գիտահետազոտական լաբորատորիաների, հոգեբանական ախտորոշման և խորհրդատվության համատեղ գործունեության կազմակերպման, սարքավորումների և տեխնիկական հնարավորությունների փոխօգտագործման, ինչպես նաև համատեղ գիտափորձերի, հետազոտությունների և հրապարակումների իրականացման ուղղությամբ:

3. Համագործակցության սկզբունքները

3.1 Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025թ. հունիսի 24.-ին:
4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Միություն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Հայաստանի հոգեբանների միություն» մասնագիտական ՀԿ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Նանսենի փ. 3շ.
Ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	Նախագահ՝ Հրանտ Ավանեսյան
ստորագրություն, Կ.S.	ստորագրություն, Կ.S.